

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ N 43/5

ք.Երևան

20 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով քաղաքացի Կառլեն Սումբատյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

ՀՀ Մաքսային ծառայության մասին օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, իսկ մաքսային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել այն կատարելու կամ ցուցաբերելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայողների կողմից քաղաքացի Կառլեն Սումբատյանի գործով իրականացված գործողությունները տեղի են ունեցել 2018 թ. հունվար ամսին, սակայն դրանց դեմ բողոքը տրվել է 18.07.2018թ.՝ վերոգրյալ իրավանորմով նախատեսված մեկամսյա ժամկետի խախտմամբ:

ՀՀ Մաքսային ծառայության մասին օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացվել է վերոհիշյալ հոդվածով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Քննարկվող դեպքում քաղաքացի Կառլեն Սումբատյանի կողմից բաց է թողնվել ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայողների գործողությունների՝ վարչական կարգով բողոքարկելու ժամկետը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Քաղաքացի Կառլեն Սումբատյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ